



Օգոստոս 9, 2010

Վսեմաշուք Տիկ. Հրանուշ Յակոբեան  
Մփիւոքի Նախարար  
Հայաստանի Հանրապետութիւն  
Երեւան, Հայաստան

Միրելի Տիկ. Յակոբեան,

Շնորհակալութեամբ ստացայ Ձեր Օգոստոս 3 թուակիր նամակը, սրտի գոհունակութեամբ հետեւած ըլլալով Մփիւոքի Նախարարութեան աշխատակիցներ Կրետա Մնացականեանի եւ Մարիաննա Գեորգեանի միամսեայ ծրագրին, որ Աստուծոյ շնորհքով իր յաջող աւարտին հասաւ:

Այս գիրով նախ կ'ուզեմ վերայայտնել Հայկազեան Համալսարանի յանձնառութիւնը սատարելու հայրենիքին ու ամբողջ Մփիւքի վերելքին՝ մեզի տրուած կարելիութիւններու սահմաններուն մէջ: Իսկ երկրորդ կը փափաքիմ արձանագրել իմ յատուկ գնահատանքը Ձեր ընտրած աշխատակիցներուն Կրետայի եւ Մարիաննայի լուրջ ու անկեղծ մասնակցութեան մեր ծրագրին, ինչ որ բարի համբաւ թողուց Ձեր Նախարարութեան նկատմամբ յատկապէս եւ Հայաստանի Հանրապետութեան՝ ընդհանրապէս:

Հաճեցէք ընդունիլ մեր ջերմ ողջոյնը, շուտով տեսնուելու եւ գործակցութիւնը շարունակելու յոյսով՝

Ձերդ Յարգանք,

  


Վեր. Դոկտ. Փօլ Հայտօսթեան  
Նախագահ Հայկազեան Համալսարանի

